

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՍՏԷՐԷՍՍԿՈՊԻՔ ՊԵՏԿԵՐՆԵՐ

Պ. Վրոյրը ձեռնարկել է մի գեղեցիկ գործ, որի սկիզբը դրել է մեր մէջ հանգուցեալ Յ. Քիւրքչեանը, այն է՝ պատրաստել հայրենի վանքերի ու այլ աւերակների ստէրէօսկօպիք պատկերները: Մեր խմբագրութեան ուղարկուած են այդ պատկերներից ս. Էջմիածնի զանազան տեսարանների ընդօրինակութիւններ, որոնք բաւական յաջողուած պատկերներ են:

Պ. Վրոյրի մեզ ուղարկուած ցուցակից երևում է, որ առայժմ պատրաստել և հրատարակել է հետևեալ ստէրէօսկօպիքական պատկերները:

ԳՈՒԳԱՐԱՅ ԱՇԽԱՐՀ. Հաղբատի, Սանահնի, Սևորեաց ձորի և չրջակայքի նշանաւոր վայրերի տեսարաններից բաղկացած. (գինը 25 պատկերի Ա. մաս. 6 ռ.)

ԱՆԻ Ա. մասը. 50 պատկերներից բաղկացած (գ. 10 ռ.):

ԱՆԻ Բ. մասը. նոյնպէս 50 պատկերներից բաղկացած (գ. 10 ռ.):

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ՆԻ ՇՐՋԱՆԱՅՔԸ (Ս. Էջմիածնի հիմնարկութեան 1600-ամեակի առիթով Ա. մասը 25 պատկերներից բաղկացած—Ս. Էջմիածնի, Գայիանէի, Հռիփսիմէի, ձեմարանի, Զուարթնոց նոր պեղուած եկեղեցու և այլ նշանաւոր տեսարաններ. (գինը 6 ռ.):

Սև պատրաստուում են հրատարակութեան համար ԱՆԻԻ Գ. մասը, Գեղորդունիք, Սիւնիք, Արարատ և Շիրակ:

ՆՈՐ ԶՈՒՂՍԵՒ ԼՐԱՅԵՐՔ

«Իւլզանդիօն» լրագրում կարդում ենք, որ Մպահանի մօտ գտնուած Նոր-Զուղայի Ամենափրկչեան հռչակաւոր վանքը, որ ունի իւր տպարանն ու մատենադարանը, սկսել է հրատարակել մի ամսաթերթ «Նոր-Զուղայի լրագր» անունով իբրև զուտ թեմական ամսագիր, որ պէտք է կարևոր եկեղեցական, դպրոցական ու թեմական տեղեկութիւններն ու չրջաբերականները հաղորդէ Պարսկա Հնդկաստանի վիճակին: «Նոր Զուղայի լրագրի» առաջին համարում գետեղուած է եղել այդ թեմի հայերի վիճակագիրը, որոնց թիւը համարուած է 40,000 հոգի, բացի Հնդկաստանի, Բիրմանիայի և Զաւայի հայերից:

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

—Նոր-Նախիջևանից հաղորդում են մեզ հետևեալ տեղեկութիւնները:

— Յանձնուած են մամուլին և շուտով լոյս կտեսնեն Նոր-Նախիջկանում՝ Ռ. Պատկանեանի երկերի III-րդ հատորը, և Միք. Նալբանդեանցի երկերը երկու հատորով։ Երկուսի խմբագրութիւնն էլ սկզբից յանձն էր առել և կատարում էր Եր. Շահապիզը, իսկ նրա հրաժարուելուց յետոյ—առանձին յանձնաժողով Նոր-Նախիջկանի գրական անձինքներէից։ Հրատարակութիւնը մասնաւոր մարդու ծախքով է կատարուում։

— Նոյնպէս Նոր-Նախիջկանում լոյս է տեսնելու Ա. Իսահակեանի բանաստեղծութիւնների նոր ժողովածուն։

— Մուշէ վարդապետ Դանազեօղեանը տեղափոխուել է Մոսկուա։

ՆԱՄԱԿ ԽՄԲԸԳՐԻՆ

Ծնուել ես Ապարան
 Մնուել ես Բաշապարան
 Բեզ ոնց հասկացնեմ
 Ի՞նչ է վան, ի՞նչ երևան
 Ժողովր՝ առած։

Այս երեկոյ ես կարդացի կամակերի ուղիղն ասած թերթեցի «Աղբիւրի» առաջին համարը, որ ահա ես քսան և երկու տարի աչքի տակով միշտ անցեմկացնում, որպէս և մեր միւս թերթերը։ Մենք արդէն շատ անգամ աւելի ենք ունեցել դիտելու, որ հայը իւր լեզուով կարդալ չէ սիրում և բաղտի մի զարմանալի խաղ, որ հային մեղադրում են հէնց այս բանում, որ նա շատ է սիրում իւր մայրենի լեզուն։ Ի՞նչ ոչ ոք էլ ճշմարտութիւնը պարզել չի կամենում։ Մեր այժմեան միակ օրագիրը, որ սպառնում է «պատժելու» մնացեալ թերթերին, կարիք չունի այժմ ի հարկէ խօսելու հայի վերոյիշեալ պակասութեան մասին, որովհետեւ նա միլիօնաւոր ժողովրդի մէջ ամեն տեսակ յանցանքների միջոցաւ շատ ընթերցողներ ունի։ Բայց իրողութիւնը նա է, որ հայը լուրջ բան չի կարդում, իսկ մանկական միակ ամսագիրը համարեա մոռացութեան է տրուած։ Քսան երկու տարի միակ մանկական ամսագիր է հրատարակւում, ուր միշտ գրել են մեր լաւագոյն գրադէտները և շարունակում են գրելու, բայց նա դարձեալ քսան և երկու հարիւր բաժանորդ չունի, իսկ Բաքուայ հայ ինտէլիգենցիան «Զարթ» թերթում տպագրում է իւր ազգասիրական ցուցակ ծառայութեանը։ Մի երկու անգամ թատրոն եմ գնացել, ուսանող ժամանակս սուտ ազատամիտ եմ եղել, այժմ էլ ամեն տեղ քիթըս խոթում եմ իբրեւ գործիչ և ազգասէր—ահա նոցանից մէկի ծառայութեան ցուցակը։ Իսկ կարդալ և գիտենալ մայրենի գրականութիւնը, իրօք նպաստել ընթերցանութեան տարածմա-